ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2015թ. սեպտեմբերի 17-ին կայացած նիստում <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է <<Գրաֆեն-Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստանալու հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. նախատեսվող գործունեության նկարագիրը,
2. մասնագետի դիպլոմի պատճենը,
3. մասնագետի աշխատանքային գրքույկի պատճենը,
4. <<Գրաֆեն-Շին>> ՍՊԸ-ի կանոնադրության պատճենը,
5. պետական ռեգիստրի վկայականի պատճենը:

Հաշվի առնելով վտանգավոր թափոնների անվտանգ փոխադրման և պահման հարցի կարևորությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի լիակազմությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Ալեքսանդրյան

Ս. Գալստյան

Ա. Առուստամյան

Ե. Տերտերյան

Գ. Ամատունի

Կ. Կարապետյան

Ա. Ղազարյան

Ի. Հակոբյան